

Վերապատրաստող կազմակերպություն

ՀՀ ԿԳՄՍ <<ՄարտունուՆԸ Տ. Աբրահամյանի անվան

ավագ դպրոց > ՊՈԱԿ

**Ջերթական ատեստավորման ենթակա ուսուցիչների
վերապատրաստում**

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ՝

Տարասեռ դասարաններում
տեխնոլոգիա առարկայի ուսուցման հետազոտություն

ԱՆՑԿԱՑՄԱՆ ՎԱՅՐԸ՝

ՄԱՐՏՈՒՆԻ

ԱՇԽԱՏԱՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

ՀԱՍՄԻԿ

ԲԵՅԲՈՒԹՅԱՆ

ՈՒՍՈՒՑԻՉ՝

Կարինե Սաֆարյան

ԴՊՐՈՑ՝

<<Ձորագյուղի հիմնական դպրոց>>

Մարտունի-2022

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ	2
ԳՐԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ	3
ԳՈՐԾՆԱԿԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏ	12
ՏՎՅԱԼՆԵՐԻ ՄՇԱԿՈՒՄ ԵՎ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ	15
ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ	16
ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ	17

Ներածություն

Անհատի ազատությունը
ֆալսֆակիրք աշխարհի նվերը չէ. այն
գոյություն ունի
այդ աշխարհի կերտումից շատ տարիներ առաջ:

Զ. Ֆրեյդ

Դպրոցն այն վայրն է, որն աշակերտին ոչ միայն հնարավորություն է տալիս ձեռք բերել գիտելիքներ և որոշակի հմտություններ, այլ նաև նպաստում է հասարակության մեջ անհատի ձևավորմանը: Այս տեսանկյունից հատկապես կարևոր է ուշադրություն դարձնել

«Տեխնոլոգիա» առարկայի դասավանդմանը: Ի տարբերություն «Մաթեմատիկա» և

«Մայրենի» առարկաների, որոնց դասավանդումը չի պահանջում տարբերակված մոտեցում, այլ հիմնված է բացառապես աշակերտի կարողությունների և հմտությունների վրա, «Տեխնոլոգիա» առարկայի դեպքում կատարվում է արհեստական բաժանում՝ առանձնացնելով տղաների և աղջիկների խմբերը, ինչը նպաստում է դեռևս փոքր տարիքից կարծրատիպային մտածողության ձևավորմանը: Առարկայի նպատակն է սովորողի մեջ ձևավորել աշխատասիրություն, նպաստել ստեղծագործական մտքի զարգացմանը և սովորեցնում է տիրապետել որոշակի հմտությունների, որոնք կարող են հետագայում խթան հանդիսանալ մասնագիտական կողմնորոշման համար: Այսինքն դրանք հմտություններ են, որոնք հատուկ են երկու սեռերին էլ, և բոլորովին կարիք չկա դասանյութը ներկայացնել առանձին տարբերակներով:

Առաջին անգամ աշակերտները իրենց ֆիզիոլոգիան և անատոմիան ուսումնասիրում են 8-րդ դասարանում և պատկերացում են կազմում թե որոնք են ոչ թե «տղաներ»-ի և

«աղջիկներ»-ի, այլ «արական» և «իգական» սեռերի միջև տարբերությունները: Սակայն մինչև հասնելը 8-րդ դասարան, նրանք ավելի փոքր տարիքից «Տեխնոլոգիա» առարկայի միջոցով սովորում են, որ տղաների և աղջիկների միջև կան տարբերություններ ոչ միայն ըստ սեռերի, այլ նաև ըստ հասարակության կողմից իրենց վերագրած դերերի:

Իմ հետազոտական աշխատանքի գլխավոր նպատակն է՝

- Փորձել վերացնել կարծրատիպային մտածողությունը սեռերի վերաբերյալ
- Կանխել սեռով պայմանավորված մասնագիտության ընտրությունը

Այսպիսով այս հետազոտության գլխավոր նպատակն է պայքարել գենդերային կարծատիպերի դեմ «Տեխնոլոգիա» առարկայի միջոցով:

ԳՐԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ

Կրթության բովանդակությունը, դրանով պայմանավորված կրթական միջավայրը, կրթական գործընթացը հանդիսանում են այն դաշտը, որտեղ բացահայտվում և դրսևորվում են ոչ միայն կրթական ֆազաֆականության հիմնական ուղղությունները, թիրախներն ու նպատակները, այլ նաև հասարակական պատկերացումները և կրթական ֆազաֆականությունից հիմնական ակնկալիքները:

Այս իմաստով կարևորվում է "թափնված ուսումնական ծրագրի" (hidden curriculum) վերլուծությունը՝ այստեղ ներառված գեղեցիկ պատկերացումների բացահայտման նպատակով: Տարբեր հետազոտություններ փաստել են, որ ուսուցիչների վերաբերմունքը և պատկերացումները բավականին լուրջ ազդեցություն կարող են ունենալ սովորողների ուսման առաջադիմության, ինչպես նաև նրանց արժեքների և պատկերացումների ձևավորման գործում: Որոշ հետազոտություններ էլ փաստարկում են, որ ուսուցիչները ավելի ամրապնդում և սնում են գեղեցիկ դերերի վերաբերյալ սոցիալական պատկերացումները այն տարբերակված մոտեցմամբ, որ նրանք դրսևորում են ուսուցման գործընթացում տղա և աղջիկ սովորողների նկատմամբ:

Միաժամանակ, մանկավարժական միջավայրի գեղեցիկ չափումների վերլուծությունը կարևորվում է, քանի որ հնարավորություն է տալիս հետևել կրթական ֆորմալ գործընթացի շրջանում գեղեցիկ պատկերացումների ձևավորման և դրսևորման մեխանիզմները դպրոց - ԲՈՒՀ - ապագա մանկավարժ դերակատարների օրինակով:

Միաժամանակ, մանկավարժական միջավայրի գեղեցիկ չափումների վերլուծությունը կարևորվում է, քանի որ հնարավորություն է տալիս հետևել կրթական ֆորմալ գործընթացի շրջանում գեղեցիկ պատկերացումների ձևավորման և դրսևորման մեխանիզմները դպրոց - ԲՈՒՀ - ապագա մանկավարժ դերակատարների օրինակով:

Հայաստանի Հանրապետության կրթության ժողովրդավարական բովանդակությունը սահմանված է տարբեր օրենքներով, նորմատիվային փաստաթղթերով, որոնք, բխելով պետական սահմանադրական սկզբունքներից, սահմանում են, որ պետությունը երաշխավորում է կրթության բնագավառում ժողովրդավարական կառավարման սկզբունքների ապահովումը: Միաժամանակ, խնդրին առնչվող հետազոտությունների նյութերը ցույց են տալիս, որ ժողովրդավարական սկզբունքների հիման վրա խարսխված պետական կրթական ֆազաֆականությունը լիարժեք կերպով հնարավոր չի լինում իրականացնել: Գոնե գեղեցիկ խնդիրների մասով թիրախավորված կերպով սահմանված չենսեռով պայմանավորված հնարավոր խտրականությունների դաշտերը կրթության ոլորտում, միաժամանակ կրթողների և կրթվողների պատկերացումները ևս անմիջականորեն ազդում են կրթության բովանդակության և արդյունքի վրա:

Հետևաբար, խնդիրը կարևորվում է մի քանի հարթություններում.

- Կրթական ֆազաֆականության,
- Կրթական միջավայրի,
- Կրթություն մատուցողների (կրթական ծառայությունների մատուցողների (բոլոր հարթություններում՝ նախակրթական, տարրական, հիմնական և ավագ դպրոցներ, միջին մասնագիտական հաստատություններ և բուհեր)

• Կրթություն ստացողների գենդերային զգայունության բացահայտման և վերլուծության: Հիմնական խնդիրների այս խմբի առանձնացումը պատահական չէ: Այն բխում է հետազոտական առաջարկի հիմնական գիտական կանխավարկածներից և հանգում է հետևյալ հիմնական իրողություններին.

- Հայաստանյան իրականություն և հայաստանյան պատկերացումներ գենդերի, գենդերային դերերի և գործառնությունների մասին: Ակնհայտ է, որ այսօր հայաստանյան գենդերային դիսկուրսը ձևավորվում է տարբեր, հաճախ հակադիր մոտեցումների արդյունքում: Մոտեցումներից մեկը հանգում է ազգային, ազգային արժեքների հետ կապված պատկերացումների հստակեցմանը, մյուս դեպքում հիմնում ունենալով նույն մոտեցումները, փորձ է արվում է հիմնախնդիր դիտարկել ավելի լայն կոնտեքստում, ներառելով միջազգային փորձը, միջազգային պրակտիկաներն ու ըստ այդմ բարձրացնել նաև դրանց Հայաստանում կիրարկման հնարավորությունները:
- Երկրորդ հարթությունը վերաբերում է արդեն հիմնականում կրթական ֆազաֆականությանը: Կրթական համակարգի վերափոխումները բոլոր մակարդակներում իրականացվում են միջազգային կազմակերպությունների հետ համագործակցելով: Որպես հիմնական համագործակցող կառույցներ ու կազմակերպություններ հանդես են գալիս Եվրոպական Միությունը, Եվրոպայի Խորհրդի տարբեր կառույցներ, Համաեվրոպային Բանկն ու որոշ այլ միջազգային կազմակերպություններ, որոնք տրամադրում են նաև ֆինանսական աջակցություն վերափոխումների տարբեր բաղադրիչների իրականացման համար, որոնց նպատակը հանգում է ժողովրդավարական արժեքների վրա հիմնված կրթության տրամադրման համար համապատասխան հնարավորությունների ստեղծմանը միաժամանակ, պետական կրթական ֆազաֆականության փաստաթղթերի վերլուծությունը ցույց է տալիս, որ նաև այստեղ ևս ներառված են "գենդերային մոտեցումներ, սկզբունքներ ու ձևակերպումներ"
- Հաջորդ հարթությունում, ինչն արդեն, որպես կանոն բացահայտվում է որակական հետազոտությունների արդյունքում, արդեն ակնհայտ է դառնում որոշակի խզումը պետական կրթական ֆազաֆականության փաստաթղթերում ամրագրված դրույթների և պետական կրթական ֆազաֆականությունում, արդեն հաջորդ հարթություններում իրականացվող գործողությունների միջև: Սա նշանակում է, որ պետական ֆազաֆականության փաստաթղթերում արձանագրված "գենդերային գործոնները" ոչ միշտ են իրականացվում այնպես, ինչպես դրանք ձևակերպված են: Իրականացված ուսումնասիրությունը հնարավորություն տվեց բացահայտել նաև այս իրողության որոշ պատճառներ: Շատ ուղորտներում, ըստ էության, բացակայում են մոնիտորինգային գործողություններ, այսինքն, չկա իրագործման ընթացքի հանդեպ վերահսկողության ու գնահատման գործիքների համակարգ և չկան այն ելքային ցուցանիշները, որոնք հնարավորություն կտան գնահատել գործողությունների արդյունավետությունը:
- Կրթական ֆազաֆականությանը վերաբերող բազմաթիվ, այդ թվում՝ միջազգային ուսումնասիրություններում ցույց է տրված, որ կրթական գործընթացը, հստակ վերահսկողության ու մոնիտորինգի բացակայության կամ ոչ բավարար լինելու պարագայում, սուբյեկտիվ է կամ պարունակում է սուբյեկտիվության որոշակի չափաբաժին, քանի որ կրթական գործընթացի հիմնական ակտորները՝ ուսուցիչներ, դասախոսներ, կրթական գործընթաց փոխանցում և վերարտադրում են սեփական գենդերային պատկերացումները, որոնք ոչ միշտ են համընկնում պետական կրթական ֆազաֆականության սկզբունքների ու նպատակներին:

Հետազոտությունը¹ հնարավորություն տվեց բացահայտել, որ որպես գիտական կանխավարկած/ներ ձևակերպված այս դրույթները հիմնականում համապատասխանում են իրականությանն ու դրանք էլ հիմնականում ձևավորում «գենդերային դիսկուրսը» կրթության ասպարեզում:

• **Կրթության բովանդակություն.** Տարբերակված կրթություն աղջիկների և տղաների համար՝ Նշվեց, որ Հայաստանի Հանրապետությունում ապահովվում է կրթական իրավունք՝ անկախ սեռից, ինչպես նաև երաժիշտություն է կրթության բնագավառում ժողովրդավարության սկզբունքների ապահովումը:

Սակայն արդեն իսկ կրթական ֆառաֆակնության իրականացման դաշտում դրսևորվում են սեռերի հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների իրացման հետ կապված խնդիրներ: Հետազոտության նյութերը ցույց տվեցին, որ հանրակրթական համակարգում դեռևս կարելի է հանդիպել առարկա, որը ենթադրում է գիտելիքների և հմտությունների տարբերակված ուսուցում՝ պայմանավորված սովորողների սեռով: **2007** թվականից ՀՀ հանրակրթական դպրոցի ուսումնական ծրագրում ներդրվել «Տեխնոլոգիա» առարկան (**1-7-րդ** դասարաններում), որը, ըստ էության, խորհրդային շրջանում ընդունված «Աշխատանքի ուսուցում» առարկայի իներցիոն շարունակությունն է: Ինչի մասին վկայում է նաև առարկայի մեթոդիստներից մեկը, «աշխատանքի ուսուցում առարկան հանդիսանում էր սոցիալիզմի կայացման համար նախնական մասնագիտական կողմնորոշման միջոց»:

Անկախության տարիներին արդեն աստիճանաբար մշակվեցին և ներդրվեցին վերանվանված առարկայի չափորոշիչը, ծրագիրը և դասագիրքը: Առարկայի չափորոշիչը սահմանում է, որ

«տեխնոլոգիա հանրակրթական առարկայի հիմնական առաքելությունն է սովորողներին նախապատրաստել ժամանակակից արդյունաբերական-տեղեկատվական հասարակարգում ինֆորմացիոն աշխատանքային կյանքին և դաստիարակել կիրք, ստեղծագործ, նախաձեռնող և ակտիվ անձնավորություն»: Միաժամանակ դասագրքի բովանդակությունում ներկայացված թեմաները բաժանված են ընդհանուր, տղաների և աղջիկների թեմաների:

Այս բաժանումը հիմնավորվում է նաև նորմատիվ ակտերով, երբ կրթության և գիտության նախարարի հրամանով նախատեսվում է, որ միջին դպրոցում առարկայի պարապմունքներից դասարանը կհավում է երկու խմբի՝ տղաների և աղջիկների, անկախ աշակերտների թվից (տես՝ Հանրակրթական ուսումնական հաստատությունների **2013-2014** թթ. «Հաստատության ուսումնական պլանի պարզաբանման» **23-րդ** կետը): Պարապում են յուրաքանչյուր խմբի համար հաստատված համապատասխան առարկայական ծրագրերով: Տղաների և աղջիկների համար տարբերակված ծրագրերը նպատակաուղղված են սովորողներին ապահովելու այնպիսի գիտելիքներով ու հմտություններով, որոնք կնպաստեն մասնագիտական կողմնորոշմանը և հետագայում հիմք կծառայեն արհեստագործական թեմանով դասարաններում ուսումը շարունակելու համար: Ընդ որում, առարկայի շրջանակներում ներկայացված թեմաների **30%**-ը ընդհանուր են և դասավանդվում թե տղաների, թե աղջիկների համար: Իսկ մնացած թեմաները տարբերակված են ըստ տղաների կամ աղջիկների;

Սեռային բաժանման նման սկզբունքը առարկայի մեթոդիստները համարում են միանգամայն հիմնավորված, քանի որ «այս առարկայի միջոցով ֆունդամենտալ գիտելիք է տրվում, որպեսզի աշակերտը ապագայում կարողանա գտնել իր տեղը; Օրինակ՝ «Նյութերի գեղարվեստական մշակում» թեմայի շրջանակներում աղջիկներին դասավանդում են գորգագործություն, կարպետագործություն, ասեղնագործություն, ինչը հետագայում նրանց հնարավորություն կտա ապահովել համապատասխան զբաղվածություն»: Տարբաբաժանված թեմաները և դրանց բովանդակությունն ու հարցադրումները, սակայն, ամենևին չեն նպաստում համակողմանի զարգացած անձի ձևավորմանը, ով հետագայում պետք է կարողանա արդյունավետ իրացնել իր ներուժը ապագա մասնագիտական բնագավառում: Որպես ևս մեկ օրինակ կարելի է նշել աղջիկների համար առանձնացված «Նոսիարություն» բաժինը, որին հատկացված է **6** ժամ՝

«Մննդի և սնվելու նշանակությունը և խոհանոցի կահավորանքը» ենթաթեմաների դասավանդման համար:

Տեխնոլոգիա առարկայի չափորոշիչը սահմանում է այն գիտելիքները, հմտություններն ու կարողությունները, որ պետք է ստանա սովորողը առարկայի արդյունքում:

Անհրաժեշտ նյութերի պարունակություն, սննդային թունավորումների, վարակների կանխարգելու միջոցներ, խոհանոցային վնասվածքների դեպքերում առաջին բուժ. օգնության ցուցաբերում, տեղեկացվածություն սննդամթերքում վիտամինների, հանքային նյութերի կազմի փոփոխության մասին՝ կապված մեակման պայմանների հետ, գիտելիքներ ձկնեղևի, մսեղևի, կիսաֆաբրիկատ պահածոների պահպանման ժամկետների և պայմանների մասին, տարբեր մթերքի ջերմային մեակման տարբեր եղանակների հետ ծանոթություն և նախնական հնտությունների ձևավորում և այլն:²

Ակնհայտ է, որ այս կարևոր հարցադրումները իրոք նպաստում են ինֆնուրայն, ինֆնավստահ մարդու կայացմանը, սակայն տվյալ դեպքում այնքան էլ համոզիչ չի առարկայական ծրագրի մտեցումը՝ նշված գիտելիքները փոխանցել միայն աղջիկներին, դրանով իսկ տղաներին զրկելով ապագայում կենցաղում և իրենց կյանքի կազմակերպման ու պլանավորման հարթություններում ավելի տեղեկացված լինելու հնարավորությունից:

Ուրախ մասնագետները իրենց կարծիքներում նշում են, որ առարկայական ծրագրի գեղեցիկ համահարթեցումը չի կարող բարենպաստ անդրադառնալ առարկայի արդյունավետության վրա, քանի որ այդպիսի կիրառվելու դասաժամերը, որոնք համարվում են առանց այն էլ շատ սահմանափակ՝ հաշվի առնելով առարկայի անհրաժեշտությունը և կիրառականությունը կրթական համակարգում:

Իհարկե, մասնագետների կարծիքով ոչ բավարար դասաժամերի խնդիրների լուծման այլ տարբերակների առաջ քառումը հնարավոր է, որ բարձրացնի առարկայի արդյունավետությունը, քան ներկայիս գեղեցիկորեն տարաբաժանված համակարգը, ինչն իր հերթին չի համապատասխանում ՀՀ որդեգրած կրթական ֆազաֆականության զարգացման ժողովրդավարական սկզբունքներին: Բացի այդ ուրախ փորձագետներից մեկը նշում էր, որ դեռևս սեխնիկապես հագեցված չեն առարկայի դասասեղանները, ինչը հնարավորություն չի տալիս լիարժեք իրականացնել ծրագրով նախատեսված խնդիրները: Ծրագրով նախատեսված մետաղի մեակման, հաստոցների, էլեկտրատեխնիկական սաֆավորումների հետ իրական աշխատանքի հնարավորության բացակայության պայմաններում (ինչի մասին նշում են առարկայի մեթոդիստները և ուսուցիչները) դժվար է պատկերացնել դրանց հետ կապված գործնական հնտությունների փոխանցում սովորողներին: Հետևաբար, ստեղծված իրավիճակում առավել քան անհամոզիչ են դառնում ուրախ ներկայացուցիչների պնդումները, որ առարկայի գեղեցիկորեն տարաբաժանումը նպաստում է սովորողների համար գործնական, իրական կյանքում կիրառելի հնտությունների և գիտելիքների ձևավորմանը:

Առարկայի ծրագրում ներառված "Մասնագիտական կոմունորոշում" թեման հանդիսանում է հանրակրթության առանցքային հասկացություններից ու թեմաներից: Ծրագրով նախատեսված մետաղի մեակման, հաստոցների, էլեկտրատեխնիկական սաֆավորումների հետ իրական աշխատանքի հնարավորության բացակայության պայմաններում (ինչի մասին նշում են առարկայի մեթոդիստները և ուսուցիչները) դժվար է պատկերացնել դրանց հետ կապված գործնական հնտությունների փոխանցում սովորողներին: Հետևաբար, ստեղծված իրավիճակում առավել քան անհամոզիչ են դառնում ուրախ ներկայացուցիչների պնդումները, որ առարկայի գեղեցիկորեն տարաբաժանումը նպաստում է սովորողների համար գործնական, իրական կյանքում կիրառելի հնտությունների և գիտելիքների ձևավորմանը:

"Տեխնոլոգիա" առարկան, հանդիսանալով նախնական մասնագիտական կոմունորոշմանն ուղղված գործիքներից մեկը, փաստորեն ինստիտուցիոնալ գիտելիքի միջոցով նախանշում է հասարակական պատկերացումներում գերիշխող մասնագիտությունների գեղեցիկորեն ուղղվածությունները և նպաստում է դրանց վերարտադրությանը, դրանով իսկ սահմանափակելով կրթության ժողովրդավարական սկզբունքը:³

Կարծրատիպերն հնարավոր է արմատախիլ անել միայն դրանց դեմ պայքարելով: Որքան վաղ է սկսվում դրա դեմ պայքարն, այնքան ավելի զգալի է լինում արդյունքը: Չպետք է թուլյ տալ որ տարբերակված ուսուցումը խթան հաղիսանա կարծրատիպային մտածողության արմատավորմանը:

Գնահատման մեթոդներ.

1. Առաջադրանք, որը ներառում է հաշվետվություն, խմբային աշխատանք: Առաջադրանքների նպատակն է գարգացնել և ստուգել սովորողների կոմպետենցիաները, վերլուծության կարողությունները, գիտելիքի ինտեգրված կիրառումը, նոր գիտելիքի ինֆորմայն ձեռքբերման կարողությունը, գիտական գրականությունից օգտվելու կարողությունները և այլն: Քանի որ կոմպետենցիաները սովորաբար ունեն համալիր բնույթ, այդ պատճառով անհրաժեշտ են դառնում գնահատման չափանիշների կիրառումը, որոնք պետք է հասանելի լինեն սովորողներին և դասախոսներին:
2. Վարձագծի գնահատում աշխատանքում, որը ներառում է կատարման գնահատում, աշխատանքի օրինակի ստուգում հետադարձ կապի մեթոդ և այլն: Սա ինտեգրված ստուգում է, որտեղ սովորողներից պահանջվում է կատարել ուսումնական կամ հետազոտական իրավիճակներում տարբեր երկարատև գործողություններ: Վարձագծի գնահատման ժամանակ առաջադրանքներն ունեն ինտեգրված բնույթ, այս գնահատումը կիրառվում է, երբ անհրաժեշտ է ստուգել մասնագիտական պարտականությունների և առաջադրանքների կատարման համապատասխանությունը սովորողների կոմպետենցիաների մակարդակին, որը պահանջում է խորը գիտելիքներ,

անալիտիկ մտածողության հմտություններ, մասնագիտական վարժագիծ, ֆինարկիման կարողություններ, մեթոդաբանական գիտելիքներ մասնագիտական ոլորտից և այլն: Սովորողների հմտությունները գնահատելու համար կիրառվում են գնահատման սանդղակներ, չափանիշներ և վարժագծային դիտարկելի տարրեր: Գնահատողները կարող են լինել ուսումնական խորհրդատուներ, դասավանդող դասախոսներ, պրակտիկայի վայրի ներկայացուցիչներ և այլն, որոնք սովորողների հետ աշխատել են երկար ժամանակ:

1. Մասնակցություն: Այս մեթոդը գնահատում է սովորողների ակտիվությունը ֆինարկիմաներին, տարբեր տեսակի պարապմունքներին, ֆանի որ միայն ներկայությունը (հաճախումը) չի նպաստում սովորողի կողմից բովանդակության իմացություն կամ հմտության տիրապետում: Սովորողի մասնակցությունը գնահատելու համար դասախոսը օգտագործում է գնահատման սանդղակ: Մյուս դեպքում հաճախելիությունը հանդես է գալիս որպես գնահատման բաղադրիչ:
2. Գործընկերների գնահատում: Սովորողները գնահատում են միմյանց կատարած աշխատանքները: Գործընկերների գնահատումը հաճախ օգտագործվում է թիմային աշխատանքներում: Գնահատելով մյուսներին՝ սովորողները սովորում են՝ ինչպես կարող են իրենք կազմակերպել իրենց մասնակցությունը ընդհանուր գործողություններում և ինչ է անհրաժեշտ անել այդ ուղղությամբ: Գործընկերների գնահատումը կարող է ազդեցություն ունենալ սովորողի ամփոփիչ գնահատման համար, և չի կարող որոշիչ լինել սովորողի ֆինությունը հանձնելու համար: Գործընկերների գնահատումը թույլ է տալիս և՛ դասախոսներին, և՛ սովորողներին հետևել, ուղղել իրենց վարժագիծը և կոմպետենցիաները:
3. Հմտությունների թեստ, որի նպատակն է պարզել, թե որքանով են սովորողներն ունակ իրականացնել տարբեր կոմպետենցիաները՝ օգտագործելով իրենց գիտելիքները: Ելնելով նպատակից՝ դասախոսը որոշում է՝ առանձին հմտություն^օն է պետք ստուգվի՝ որպես ամբողջականի մի մաս, թե՞ պետք է ստուգվեն մի շարք հմտություններ: Սովորողների կոմպետենցիաները ստուգվում են գործնական առաջադրանքների միջոցով, կիրառվում են մասնագիտական սարքավորումներ /լաբորատոր սարքավորումներ, հատուկ համակարգչային ծրագրեր, գործիքակազմ և այլն/: Սովորողների հմտությունների գնահատման համար օգտագործվում է գնահատման սանդղակ կամ գնահատման հատուկ չափանիշներ:

16. Գործնական առաջադրանքներ: Սա գնահատման մեթոդ է, երբ սկզբում դասախոսները ներկայացնում են աշխատանքի խնդիրները, պահանջները և ուսումնառողներն աշխատում են դասախոսի ղեկավարության ներքո, հատուկ լսարաններում, լաբորատորիաներում, արհեստանոցներում և այլն: Այս մեթոդի հիմնական նպատակն է տեսական գիտելիքների հիման վրա ձևավորել գործնական կարողություններ, հմտություններ: Այս մեթոդի կիրառումը թույլ է տալիս դասախոսին ստուգել տեսական գիտելիքների յուրացման աստիճանը և դրանց կիրառումը:

17. Ինֆրաստրուկտուրայի, փոխտրուկտուրայի: Ինֆրաստրուկտուրայի — Սովորադրյալ ինֆրաստրուկտուրայի բացահայտում է իր աշխատանքում թույլ տված սխալներ, անում է համապատասխան ուղղումներ և ավելի է բարձրացնում իր գիտակցականության մակարդակը ուսուցման գործընթացում: Փոխտրուկտուրայի միմյանց աշխատանքների ստուգումն է, որը զարգացնում է ուսումնառողի ուսուցողությունը, ինֆրաստրուկտուրայի կատարված աշխատանքների նկատմամբ: Այս գնահատման մեթոդներն ակտիվացնում են սովորողների իմացական գործունեությունը, զարգացնում ինֆրաստրուկտուրայի աստիճանը և նպաստում թիմային, գույգերով աշխատանքներին և այլն: Ուսուցման արդյունքների գնահատման համար ստուգվում է սովորողների պատրաստվածությունը (գիտելիքներ, կարողություններ, հմտություններ) և որոշվում, թե այն ինչքանով է համապատասխանում կրթական աստիճանի ավարտին՝ առարկայական չափորոշիչով սովորողներին ներկայացվող պահանջներին, իսկ ուսումնառության ընթացքում՝ առարկայական ծրագրում ամփոփված չափորոշիչային պահանջներին: Ուսուցման արդյունքների ստուգման և գնահատման համար սովորողներին տրվում են առաջադրանքներ՝ հարցեր, խնդիրներ, վարժություններ, գործնական աշխատանքներ, հանձնարարություններ, որոնց միջոցով բացահայտվում են.

- սովորողների յուրաքանչյուր գիտելիքների ամբողջությունը, կայունությունը, հիմնավորությունը, խորությունը,
- գիտելիքները պարզ, ոչ պարզ, բարդ, ծանր և անծանր իրադրություններում կիրառելու կարողություններն ու հմտությունները,
- կատարած մտավոր գործունեությունն արտահայտելու, ներկայացնելու, շարադրելու մակարդակը, որի բացահայտման համար հաշվի են առնվում նաև թույլ տրված սխալները, անհետությունները, թերությունները և բացթողումները:

Սովորողների պատրաստվածությունը բացահայտվում է հիմնականում բանավոր հարցումների, գրավոր և գործնական աշխատանքների միջոցով, որոնց համար նախապես կազմվում են առաջադրանքներ և հանձնարարություններ, մշակվում դրանց գնահատման չափանիշներ:

Սովորողների ուսումնառության, առարկայական ծրագրերի և պլանների, չափորոշիչների, ինչպես նաև կրթական ֆազիականության մասին որոշումներ կայացնելիս գնահատումը սահմանվում է որպես տեղեկատվության ձեռքբերման գործընթաց: Սովորողների գիտելիքների, կարողությունների, հմտությունների և նրանց մոտ ձևավորվող արժեքային համակարգի բարելավման նպատակով որոշումներ կայացնելիս հաշվի են առնվում ուսուցման կազմակերպումը, ուղղորդումը և խորհրդատվությունը, կրթական հնարավորությունների բացահայտումը, սովորողների ձեռքբերումների և իմացության աստիճանի ամրագրումն ու վկայագրումը:

Առարկայական ծրագրերի և ուսումնական պլանների բարելավման ու կատարելագործման նպատակով օգտագործվում են միավորային՝ նիշային և ուսուցանող՝ ոչ նիշային գնահատման արդյունքները: Գնահատումը տեղեկատվության հավաքումն է այն մասին, թե ուսումնառության նպատակի որ աստիճանին է հասել սովորողը: Այդ տեղեկությունների համար աղբյուր են գրավոր թեստերի արդյունքները, տնային առաջադրանքի կատարման մակարդակը, լաբորատոր և այլ գործնական, հետազոտական բնույթի գրավոր աշխատանքները, նախագծերը, բանավոր հարցումները, կիսամյակային միավորային աշխատանքները և ուսուցանող գնահատման ուղղությամբ արված աշխատանքների մասին գրանցումները: Գնահատումը, արժևորումը և չափումը եզրույթներ՝ տերմիններ են, որոնք առնչվում են որոշակի տվյալների պարբերական հավաքման և որոշումներ կայացնելու նպատակով դրանց վերլուծության հետ: Կենցաղային օգտագործման մեջ այդ եզրաբառերը երբեմն նույնացվում են, սակայն առկա են

ենթիմաստային տարբերություններ, որոնց իմացությունը կարևոր է հատկապես դասավանդող ուսուցիչների համար:

Որո՞ւց դեպքերում այդ եզրույթները ձեռք են բերել նոր իմաստներ կամ իմաստային նրբերանգներ:

Արժևորումն աշխատանքի, արդյունքի, երևույթի արժեքավորության կամ արժեքի մասին հիմնավորված եզրահանգում անելն է: Ուսուցիչներն արժևորում են, թե սովորողներն ինչպիսի հաջողությամբ կամ ինչ չափով են հասնում իրենց ուսումնական նպատակներին: Ուսուցիչներն սովորողներին արժևորում են նաև օլիմպիադաներին կամ այլ ստուգատեսների ու մրցույթների նրանց պատրաստակա՞նության իմաստով, ինչպես նաև տարեվերջին որո՞՞շտ արդյո՞ւմ նրանք բավարար չափով պատրաստ են հաջորդ ուսումնական տարում կրթությունը բարեհաջող շարունակելու համար, թե՞ անուանը լրացուցիչ աշխատելու անհրաժեշտություն կա:

Գործնական համատեքստ

Հետազոտությունն անցկացրել էմ
Գեղարքունիքի մարզի Ջորազյուզի
հիմնական դպրոցում

ՓՈՐՁԱՐԱՐԱԿԱՆ ԴԱՍԻ ՊԼԱՆ 1

Անունը՝ Կարինե Սաֆարյան

Դասարանը՝ 5-րդ

Առարկան՝ Տեխնոլոգիա

Թեմա՝ «Ջեռքի կարատեսակների նշանակությունը և դրանց կատարման տեխնիկան» Դասի տեւողությունը՝ 45 րոպե Դասի նպատակը՝

Մանրացնել ձեռքի կարատեսակներին՝ թակալակար, ետկար, եզրակար, մաքրակար, խաչքար: Ներկայացնել գծավորանման կարերի նշանակությունը և դրանց կատարման տեխնոլոգիան:

Անհրաժեշտ նյութեր՝ ասեղ, թել, կտոր

Դասի ընթացքը՝ «Մտագրոս» մեթոդի կիրառմամբ պարզել սովորողների գիտելիքների առկա մակարդակը «ձեռքի կարատեսակներ» հասկացության մասին:

Ջեռքի կարատեսակները հասկացության մասին խմբերին ուղղել հետևյալ հարցադրումը. Ինչ կարերի տեսակներ գիտեք: Ինչպես են դասակարգում կարերը ըստ նշանակության:

Իմաստի ընկալում դասարանը բաժանել խմբերի: Ստեղծել խնդրահարույց իրավիճակ՝ առաջադրելով խմբերին ընտրել առաջարկված ֆարտերից մեկը:

Միացման կար զարդակար խաչկար

Խմբերը ներկայացնում են իրենց տեսակետները. կսում միմյանց կարծիքները և կազմակերպում ֆննարկումներ

Կուսակազմում՝ «Քառաբաժան» մեթոդի միջոցով պարզել սովորողների զգացողությունները, ինչպես նաև նյութի ընկալման աստիճանը

1. Ինչ գիտեին
2. Ինչ նոր խմացան
3. Ինչը անհասկանալի մնա

Բաժին՝ ԽՈՀԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Առարկան՝ Տեխնոլոգիա Ուսուցչիանունը՝

Կարինե Սաֆարյան

Դասարանը՝ 5-րդ

Դասիտեղույթունը՝ 45 բույե Դասիթեման՝

§13 Սեղանի սպասադրում էջ56-60

Դասին պատակները՝

Սովորեցնել ինչպես սպասադրել թեյի կամ սուրճի սեղանը: Հաղորդել տեղեկություններ սեղանի սպասադրման վերաբերյալ:

Դասի ավարտին առակերտը պետք է՝

- Իմանա — — Ինչպես սպասադրել եւ օգտվել սեղանից:
- Կարողանա — — Գեղեցիկ սպասադրել սեղանը
- Տիրապետի — — — Սպասադրման եւ օգտվելու բոլոր կանոններին

Անհրաժեշտ պարագաներ _____ Սպասի պարագաներ, սփռոց, անձեռոցիկ:

Ցուցադրական նյութեր - Ձեւավորված անձեռոցիկներ,

Դասի ընթացքը՝

Հարցման միջոցով կրկնել անցած թեմաները և ստեղծել կապ նոր թեմայի հետ՝ խթանելով սովորողների հետաքրքրվածությունները:

Օգնել առակերտներին ճիշտ սպասադրել սեղանը, ծանոթացնել առաջին եւ երկրորդ ուսուսուների համար մատուցվող սպասի տեսակներին հետ:

Ամրապնել առակերտների համոզմունքները ֆննարկման միջոցով:

Տնային հանձնարարություն՝ Ներկայացնել անձեռոցիկների ծալադրման օրինակներ: Գնահատում՝ Գնահատել ըստսովորողների ցուցաբերած ակտիվության:

Դասի մեկնաբանություն՝ — — Դասի նպատակը իրականացված է:

ՓՈՐՁԱՐԱՐԱԿԱՆ ԴԱՍԻ ՊԼԱՆ 3

Բաժին՝ ԽՈՀԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Առարկան՝ Տեխնոլոգիա

Ուսուցչիանունը՝ Կարինե Սաֆարյան

Դասարանը՝ VI

Դասի տևողությունը՝ 45 րոպե

Դասի թեման՝ §9 Բանջարեղենից կերակրատեսակներ պատրաստելու տեխնոլոգիա Գործնական աշխատանք
էջ 79-82

Դասի նպատակները՝

1) Ակադեմիական_Բանջարեղենից պատրաստել կերակրատեսակներ:

2) Սոցիալական_____Կարողանալ կիրառել բանջարեղենից կերակրատեսակներ պատրաստելու կանոնները

Դասի ավարտին աշակերտը պետք է՝

• Իմանա _____ Բանջարեղենը ճիշտ պահպանելու կանոնները

• Կարողանա — — — Պատրաստել կերակրատեսակներ բանջարեղենի ջերմային մեղման ճիշտ եղանակով

• Տիրապետի — — — Բանջարեղենի կտրտման տեխնոլոգիային

Անհրաժեշտ պարագաներ _____ Կաթսա, բանջարեղեն եւ այլ մթերքներ

Ցուցադրական նյութեր _____ Պատրաստի կերակրատեսակներ Դասի ընթացքը՝

• Դասի խթանում՝ Խթանել սովորողների հետաքրքրասիրությունը նոր թեմայի հանդեպ, առաջադրանքների ստուգում: /10րոպե /

• Դասի իմաստի ընկալում՝ Վերահսկել աշակերտների գործնական աշխատանքի կատարման ամբողջ ընթացքը, տալ ցուցումներ: / 30րոպե /

• Դասի կռադատում՝ Վերլուծել գործնական աշխատանքները: / 5րոպե /

Ներառական կրթությամբ ընդգրկված սովորող՝ Տալ պարզ և հասանելի գործնական առաջադրանք և վերահսկել կատարման ամբողջ ընթացքը:

Տնային հանձնարարություն՝ Պատրաստել բանջարեղենային աղցան Գնահատում՝

Իրականացնել ընթացիկ գնահատում:

Անդրադարձ՝ Հասել եմ դասի նպատակին:

ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

ԱՇխատանքը սկսելուց առաջ կար մտավախությունն որ այն կունենա սխալ ենթատեքստ, ինչպիսին այսօր վերաբերմունքն ու ընկալումն է «գեղեցիկ» բառի: Բարեբախտաբար առարկությունները այդքան բուռն չէին եւ հիմնական առարկությունը տղաների դեպքում այն էր որ իրենք տանը չեն կատարում նման աշխատանք եւ չեն ընկալում դրա կարեւորությունը: Դասարանում մեծամասնությունը սիրով ընդունեց դասի կառուցվածքի նման վավախությունը, շատերին ուրախացրել էր այն վաստը որ իրենք աղջիկների(տղաների) հետ միասին կատարում են այդ աշխատանքը ու իրենց մոտ ստացվում է շատ ավելի լավ քան հակառակ սեռի ներկայացուցիչների մոտ: Դասը վարելու ընթացքում հիմնական դժվարությունը կատարված աշխատանքի կարեւորությունը աշակերտներին ներկայացնելն էր: Երեք դասերի արդյունքում կարողացա երեխաների մոտ ձեռավարել այն միտքը որ ցանկացած աշխատանք բնորոշ է եւ աղջիկներին եւ տղաներին ու դրանք կատարելը ամոթ չէ:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Աժխատանքին նպատակն է եղել «Տեխնոլոգիա» առարկայի միջոցով պայքարել գեղեցիկության կարծրատիպերի դեմ: Չնայած տղաներին եւ աղջիկներին վերագրվող դերերի մասին նախնական պատկերացումները ձեւավորվում են տանը, այնուամենայնիվ, որպես երեխայի առօրյայի անբաժան մաս, այդ հարցում իր մեծ դերակատարումն ունի նաև դպրոցը: Մասնավորեցնելով կարող եմ ասել, որ խնդիրն ավելի է խորանում, երբ հարցը հասնում է ուսուցման տարբերակված կազմակերպմանը:

Փորձարարական երեք դասերի ընթացքում դասը վարել եմ տղաների եւ աղջիկների խմբերի հետ միասին, այսինքն այնպես ինչպես ընթանում են մյուս դասերը: Երեխաների մոտ պատկերացումները դեպի «տղայական» եւ «աղջկական» գրադմունքներն ու հետաքրքրությունները ինչ-որ չափով դադարեցին դիտարկվել որպես սեռերին բնորոշ գործողություններ: Լիաճույս եմ, որ այս պայքարը կունենա որոշակի արդյունք առնվազն գյուղական միջավայրում մտածելակերպի փոփոխության տեսանկյունից. սա բարդ աժխատանք է եւ արդյունքի հասնելու համար պետք է այն լինի շարունակական, քանի որ արատը մեզանում շատ խորը արմատներ ունի:

Թեև կարճ ժամանակ հատկացրի հետազոտական աժխատանքը կատարելու, այնուամենայնիվ աժխատանքն ընդհանուր կտա թեմայի կարևորությունը գնահատողներին:

Աղջիկն օժտված է իր կյանքում առաջ գնալու կարողությամբ: Նա միայն

մայր չէ, նա միայն քույր չէ, նա միայն կին չէ:

Նա պետք է լինի ինքնուրույն:

Նրան պետք է ընդունեն, եւ նա պետք է ունենա տղային

հավասար իրավունքներ:

Մալալա Զուսաֆզայ

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. [Policy paper Ruzanna Tsaturyan.pdf](#)
2. Հանրակրթական հիմնական դպրոցի «Տեխնոլոգիա» առարկայի չափորոշիչ և ծրագիր (1-7 դասարաններ), Հավելված N1, ԿԳ նախարարի 27.01.2012, N 64-Ա/Ք հրամանի, էջ 23-24
3. «Գենդերային խնդիրները տարրական դպրոցի գասագրքերում», Ռուզաննա Ծատուրյան, Բաղաձայնությունների վերլուծության փաստաթուղթ, էջ 33,
4. <https://elearning.iedf.am/>